

ՁՎԱՐԱՆՆԵՐԻ ՊՈԼԻԿԻՍՏՈՉԱՅԻՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԻ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՑ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ամփոփում

Նպատակ

Սույն ուղեցույցի նպատակն է տրամադրել ապացույցների վրա հիմնված տեղեկություններ և ապացուցողական խորհուրդներ ձվարանների պոլիկիստոզային համախտանիշի երկարաժամկետ բարդությունների վերաբերյալ, և բարելավել տվյալ համախտանիշի երկարաժամկետ բարդությունների կանխարգելման ելքերը մեծահասակ պացիենտների շրջանում:

Մեթոդաբանություն

Սույն կլինիկական ուղեցույցը մշակվել է Հայաստանի մանկաբարձ-գինեկոլոգների և նեոնատոլոգների ասոցիացիայի անդամների կողմից: Ուղեցույցի գրականական աղբյուր է հանդիսացել Մեծ Բրիտանիայի Մանկաբարձների և գինեկոլոգների թագավորական քոլեջի (RCOG, Royal College of Obstetricians and Gynaecologists) կողմից 2014թ. հրապարակված ուղեցույցը (Long-term Consequences of Polycystic Ovary Syndrome), ինչպես նաև PubMed, EMBASE, Cochrane Library, National Guideline Clearinghouse և UpToDate շտեմարանների արդի տվյալները: Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս սկզբնաղբյուր հանդիսացող փաստաթղթերում, հիմք է ընդունվել Մեծ Բրիտանիայի Մանկաբարձների և գինեկոլոգների թագավորական քոլեջի (RCOG) կողմից առաջարկվող դասակարգումը (Տես Հավելված 1): Ուղեցույցի տեղայնցաման գործընթացը իրականացվել է համաձայն միջազգային ADAPTE մեթոդաբանության: Բոլոր խորհուրդները քննարկվել և հավանության են արժանացել Հայաստանի մանկաբարձ-գինեկոլոգների և նեոնատոլոգների ասոցիացիայի անդամների կողմից (արձանագրությունը կցվում է): Սույն փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց: Ուղեցույցը նախատեսված է ձվարանների պոլիկիստոզային համախտանիշի երկարաժամկետ բարդությունների կանխարգելման մեջ ներառված մասնագետների համար՝ մանկաբարձ-գինեկոլոգներ, էնդոկրինոլոգներ, սննդաբաններ, ընտանեկան բժիշկներ, հոգեբերապետներ, հոգեբաններ:

Արդյունքներ

Սույն ուղեցույցում ներկայացված են ձվարանների պոլիկիստոզային համախտանիշի երկարաժամկետ բարդությունների կանխարգելման վերաբերյալ ապացուցողական խորհուրդներ, որոնք օգնում են կլինիկական գործունեությունում որոշումներ կայացնելիս:

Հետևություններ

Ապացույցների վրա հիմնված կլինիկական խորհուրդները կօգնեն բարելավել ձվարանների պոլիկիստոզային համախտանիշի երկարաժամկետ բարդությունների կանխարգելման ելքերը:

Բանալի բառեր

Ապացուցողական բժշկություն, ուղեցույց, ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգ, ձվարանների պոլիկիստոզային համախտանիշ, շաքարային դիաբետ, ճարպակալում, բարիաբանական վիրահատություն

Պատասխանատու համակարգող

Աբրահամյան Ռ.Ա., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, բ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԱՆ գլխավոր մանկաբարձ գինեկոլոգ, ՎԱՊՄԳՀԻ տնօրեն

Աշխատանքային խմբի անդամներ

- Աբրահամյան Լ.Ռ., բ.գ.դ., ԵՊԲՀ Մանկաբարձության և գինեկոլոգիայի թիվ 2 ամբիոնի պրոֆեսոր
- Գրիգորյան Վ.Ֆ., բ.գ.թ., դոց., ՎԱՊՄԳՀԻ Ծննդաբերական բաժանմունքի վարիչ
- Գյուլխասյան Վ.Ս. բ.գ.թ., դոց., ՎԱՊՄԳՀԻ Օպերատիվ գինեկոլոգիայի բաժանմունքի վարիչ
- Հարությունյան Ա.Գ. MD, MPH., Հայաստանի ամերիկյան համալսարանի Առողջապահական ծառայությունների հետազոտման և զարգացման կենտրոնի ավագ գիտաշխատող

Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ

Պատասխանատու համակարգողը հայտարարում է շահերի բախման բացակայության վերաբերյալ: Սույն փաստաթղթի մշակման աշխատանքները ֆինանսավորվել են ՀՀ ԱՆ կողմից: Ֆինանսավորող կազմակերպությունը չի ունեցել որևէ ազդեցություն փաստաթղթի պարունակության կամ ձևավորման վրա:

Շնորհակալական խոսք

Աշխատանքային խումբը իր երախտագիտությունն է հայտնում ուղեցույցների մշակման աշխատանքներին իրենց աջակցությունը, խորհրդատվությունը և մասնագիտական գնահատականը տրամադրած գործընկերներին:

Ուղեցույցը չի կարող փոխարինել բժշկի որոշումներ ընդունելու հմտություններին անհատ պացիենտի վարման դեպքում և տվյալ կլինիկական իրավիճակի պայմաններում:

Բովանդակություն

Նախաբան և համաճարակաբանություն

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Ախտորոշում

Խորհրդատվություն

Երկարաժամկետ հետևանքներ

ՁՊՀ-ի մետաբոլիկ բարդություններ

Քաղցկեղ և ՁՊՀ

Ռիսկի նվազեցմանն ուղղված ռազմավարություններ

Վարժություններ և քաշի կառավարում

Դեղորայքային բուժում

Ձվարանների էլեկտրոկաուտերիզացիա

Բարիատրիկ վիրահատություն

Ներդրման հնարավորություններ և աուդիտի ցուցանիշներ

Գրականության ցանկ

Հավելված 1

Հապավումներ

ԲՄՀ՝ բնածին մակերիկամային հիպերպլազիա

ՁՊՀ՝ ձվարանների պոլիկիստոզային համախտանիշ

ՍԱՀ՝ սիրտանոթային հիվանդություն

ՍՀԿԳ՝ սեռական հորմոն կապող գլոբուլին

Նախաբան և համաճարակաբանություն

Ձվարանների պոլիկիստոզային համախտանիշը (ՁՊՀ) տարածված խանգարում է, որը հաճախ բարդանում է քրոնիկ անօվույատոր անպտղությամբ և հիպերանդրոգենիզմով, համակցված կլինիկական դրսևորումներով՝ օլիգոմենորեա, հիրսուտիզմ և ակնե [3,4]: Բազմաթիվ կանայք այս համախտանիշով ունեն ճարպակալում և գլյուկոզի հանդեպ տոլերանտության խանգարման, 2-րդ տիպի շաքարային դիաբետի և քնի ապնոէի ավելի բարձր տարածվածություն, քան նկատվում է ընդհանուր բնակչության մոտ [3]: Նրանց մոտ դիտվում են կարդիոմետաբոլիկ համախտանիշին բնորոշ անբարենպաստ սիրտանոթային ռիսկեր, որը դրսևորվում է զարկերակային գերճնշման, դիսլիպիդենիայի, ընդերային ճարպակալման, ինսուլինային ռեզիստենտության և հիպերինսուլինեմիայի գրանցված ավելի բարձր տարածվածությամբ [5,6]: ՁՊՀ-ն հաճախ ախտորոշվում է գինեկոլոգների կողմից, ուստի կարևոր է լավ պատկերացում

ունենալ ախտորոշման երկարաժամկետ հետևանքների վերաբերյալ, որպեսզի ամբողջական մոտեցում առաջարկել տվյալ խանգարմանը:

ՁՊՀ-ն վերարտադրողական տարիքի կանանց շրջանում առավել հաճախ հանդիպող էնդոկրին խանգարումներից մեկն է [7,8]: Կիրառվող ախտորոշիչ չափանիշների տարբերությունների հետ կապված, գնահատված տարածվածությունը տատանվում է լայն տիրույթում՝ 2.2-26% [9-14]: ՁՊՀ-ի տարածվածությունը ըստ Ռոտերդամյան չափանիշների ախտորոշման դեպքում երկու անգամ ավելի է, քան ըստ Մեծ Բրիտանիայի Առողջության ազգային ինստիտուտի կողմից առաջարկվող չափանիշների [14]:

ՁՊՀ-ի տարածվածությունը տարբեր էթնիկ խմբերում կարող է տարբերվել: Օրինակ՝ հարավ-ասիական ծագման կանանց շրջանում, որտեղ տվյալ հիվանդությունը հանդիպում է ավելի երիտասարդ տարիքում և դրսևորում է ավելի ծանր ախտանշաններով, տարածվածությունն ավելի բարձր է, քան եվրոպոիդների շրջանում [15,16]:

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Սույն կլինիկական ուղեցույցը մշակվել է Հայաստանի մանկաբարձ-գինեկոլոգների և նեոնատոլոգների ասոցիացիայի անդամների կողմից: Ուղեցույցի գրականական աղբյուր է հանդիսացել Կանադայի գինեկոլոգների և մանկաբարձների կազմակերպության (SOGC, Society of Obstetricians and Gynaecologists of Canada) կողմից 2015թ. հրապարակված ուղեցույցը (Vulvovaginitis: Screening for and Management of Trichomoniasis, Vulvovaginal Candidiasis, and Bacterial Vaginosis), ինչպես նաև PubMed, EMBASE, Cochrane Library, National Guideline Clearinghouse և UpToDate շտեմարանների արդի տվյալները: Տեղեկատվության որոնումը կատարվել է անգլերեն լեզվով մինչև 2017թ. հրապարակված փաստաթղթերի միջև, բանալի բառերի միջոցով (“polycystic ovarian syndrome”, “pcos”, “diagnosis”, “consequences”, “complications”, “prevention”): Որոնման փաստաթղթերի տեսակը սահմանվել է՝ համակարգային վերանայումներ, պատահական բաշխմամբ վերահսկվող փորձարկումներ և դիտորդական

հետազոտություններ: Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս սկզբնաղբյուր հանդիսացող փաստաթղթերում, հիմք է ընդունվել Մեծ Բրիտանիայի Մանկաբարձների և գինեկոլոգների թագավորական քոլեջի (RCOG) կողմից առաջարկվող դասակարգումը (Տես Հավելված 1): Ուղեցույցի տեղայնցաման գործընթացը իրականացվել է համաձայն միջազգային ADAPTE մեթոդաբանության: Բոլոր խորհուրդները քննարկվել և հավանության են արժանացել Հայաստանի մանկաբարձ-գինեկոլոգների և նեոնատոլոգների ասոցիացիայի անդամների կողմից (արձանագրությունը կցվում է): Սույն փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց: Ուղեցույցը նախատեսված է ձվարանների պոլիկլիստոզային համախտանիշի վարման մեջ ներառված մասնագետների համար՝ մանկաբարձ-գինեկոլոգներ, էնդոկրինոլոգներ:

Ախտորոշում

Ձվարանների պոլիկլիստոզ համախտանիշը պետք է ախտորոշել համաձայն ռոտերդամյան կոնսենսուսի չափանիշների: (խորհուրդի ուժը՝ D)

Մարդու վերարտադրության և սաղմնաբանության եվրոպական միության (ESHRE) և Վերարդադրողական բժշկության ամերիկյան միության (ASRM) կողմից հովանավորվող ՁՊՀ կոնսենսուսային աշխատանքային խմբի կողմից տրված ռոտերդամյան սահմանմամբ [17]: (Ապացուցողականության մակարդակը՝ 4)

Ռոտերդամյան չափանիշները առաջարկել են ՁՊՀ-ի ավելի լայն սահմանում: Ըստ ռոտերդամյան չափանիշների, նշված երեքից երկուսի առկայությունը ախտորոշիչ է ՁՊՀ-ի համար՝

1. պոլիկլիստոզ ձվարաններ (12 կամ ավել ֆոլիկուլներ, կամ ձվարանների ծավալի մեծացում՝ >10 սմ³),
2. օլիգոօվուլացիա կամ անօվուլացիա,
3. հիպերանդրոգենիզմի կլինիկական և/կամ բիոքիմիական նշաններ:

Հարկավոր է նշել, որ ՁՊՀ ախտորոշումը կարող է կատարվել միայն եթե անկանոն ցիկլերի այլ էթիոլոգիաների կասկածի առկայության դեպքում սվյալ էթիոլոգիաները, օրինակ՝ վահանազեղծի դիսֆունկցիան, ակրոմեգալիան կամ հիպերպրոլակտինեմիան բացառվել են [18]:

Հիպերանդրոգենիզմի կլինիկական դրսևորումները ներառում են հիրսուտիզմը, որը բնորոշվում է դեմքի և մարմնի մազերի շատացմամբ և որովայնի միջնակ գծի ուղղությամբ մազերի աճով: Չնայած՝ ազատ և ընդհանուր տեստոստերոնների որոշումը կիրառվում է ՁՊՀ ախտորոշելու համար, հիպերանդրոգենիզմի համար խորհուրդ տրվող հիմնական բիոքիմիական թեստը ազատ անդրոգենային ինդեքսն է (ընդհանուր տեստոստերոնը բաժանած սեռական հորմոն կապող գլոբուլինին (ՍՀԿԳ) x 100) [19]: Եթե առկա են վիրիլիզացիայի նշաններ (խորը ձայն/ձայնի տեմբրի ցածրացում, կրծքազեղծերի չափի վնասում, մկանային զանգվածի մեծացում, ծլիկի գերաճ), արագ զարգացող հիրսուտիզմ (հիրսուտիզմի նկատելի դառնալուց մինչև բժշկի դիմելը անցել է պակաս, քան 1 տարի) կամ տեստոստերոնի բարձր մակարդակ (5 նմոլ/լ-ից բարձր կամ 2 անգամ ավելին նորմայի վերին սահմանից), պետք է բացառել անդրոգեն արտադրող ուռուցքները և ուշ մեկնարկով/որ դասական բնածին մակերիկամային հիպերպլազիան (ԲՄՀ): Ֆոլիկուլյար փուլում պետք է որոշել 17-հիդրօքսիպրոգեստերոնը, որը ԲՄՀ-ի դեպքում լինելու է բարձր: Սակայն, հնարավոր է առկա լինել ԲՄՀ առանց տեստոստերոնի 5 նմոլ/լ-ից բարձր մակարդակի, հատկապես եթե կինը հետերոգիգոտ է: Ուստի, 17-հիդրօքսիպրոգեստերոնի որոշումը պետք է դիտարկել մեծ կասկածի դեպքում, օրինակ՝ հատուկ խմբերում՝ Աշկենազի հրեաների շրջանում կամ ԲՄՀ-ի ընտանեկան պատմության դեպքում, քանի որ ԲՄՀ-ի վարումը ՁՊՀ-ից տարբերվում է: Եթե, 17-հիդրօքսիպրոգեստերոնի մակարդակը սահմանային է, ՄԲՀ-ն հաստատելու պետք է կատարել ԱԿՏՀ-ի խթանման թեստ: Եթե առկա է Կուշինգի համախտանիշի կամ ակրոմեգալիայի կլինիկական կասկած, հետազոտումը պետք է կատարել ըստ տեղային (տարածաշրջանային/ազգային) փորձի [20]: Տարբեր մեթոդների և տարբեր լաբորատորիաների սահմանված նորմաները տարբերվում են լայն տիրույթում, ուստի կլինիկական որոշումը պետք է ուղղորդվի ըստ տեղային լաբորատորիայի սահմանած նորմայի և անդրոգենները նախընտրելի է չափել տանդեմ մասս-սպեկտրոսկոպիայով [17,21,22]: (Ապացուցողականության մակարդակը՝ 2+)

Խորհրդատվություն

ՁՊՀ ախտորոշված կանանց պետք է տեղեկացնել իրենց հիվանդության հետ կապված հնարավոր երկարատև առողջական ռիսկերի վերաբերյալ: (Խորհուրդի ուժը՝ E)

Կանայք պետք է տեղյակ լինեն իրենց վիճակի երկարատև հետևանքների մասին, ներառյալ սիրտանոթային ռիսկերի վերաբերյալ: Կանայք պետք է տեղեկացվեն կենսակերպի փոփոխությունների, այդ թվում քաշի նվազեցման՝ ախտանշանների բարելավման վրա թողնող դրական ազդեցության մասին, հատկապես ավելցուկային քաշով և գեր կանանց շրջանում [23]: (Ապացուցողականության մակարդակը՝ 1+)

Կանանց պետք է տեղեկացնել, որ չկան խիստ տվյալներ, որ ՁՊՀ-ն ինքնին կարող է բերել քաշի ավելացմանը, կամ որ ՁՊՀ ունեցող կանանց ավելի դժվար է կամ անհնար է քաշը նվազեցնել: Շատ պացիենտներ մեծ դրական ազդեցություն են ունենում աջակցող խմբերից, ուստի հարկավոր է տրամադրել դրանց վերաբերյալ տեղեկատվություն [24]: (Ապացուցողականության մակարդակը՝ 4)

Երկարաժամկետ հետևանքներ

ՁՊՀ-ի մետաբոլիկ բարդություններ

Բժիշկները կարող են դիտարկել առաջարկել հղիության դիաբետի սկրինինգ այն կանանց, ովքեր ախտորոշվել են ՁՊՀ մինչև հղիությունը: Սա պետք է կատարվի հղիության 24-28 շաբաթներին, և խանգարումների դեպքում ուղղորդվի մասնագիտացված բաժանմունք: (Խորհուրդի ուժը՝ E)

Հղիության դիաբետի տարածվածությունը ՁՊՀ ունեցող կանանց շրջանում երկու անգամ բարձր է [25]: Բժիշկները կարող են դիտարկել ՁՊՀ-ով բոլոր հղիներին առաջարկել

գյուկոզի հանդեպ 2 ժ-75 գ օրալ գյուկոզով տոլերանտության թեստ, ինչպես հղիության դիաբետի այլ ռիսկի գործոններ ունեցող կանանց շրջանում կատարվող սկրինինգի [26]:

ՁՊՀ-ով ներկայացող կանանց, ովքեր ունեն ավելցուկային քաշ (≥ 25 կգ/մ² ՄՁԻ) և ՁՊՀ-ով կանանց, ովքեր չունեն ավելցուկային քաշ (< 25 կգ/մ² ՄՁԻ), բայց ունեն հավելյալ ռիսկի գործոններ, օրինակ՝ մեծ տարիք (> 40 տ), հղիության դիաբետի պատմություն կամ 2-րդ տիպի շաքարային դիաբետի ընտանեկան պատմություն, պետք է կատարել գյուկոզի հանդեպ 2 ժ-75 գ օրալ գյուկոզով տոլերանտության թեստ: (տորիորդի ուժը՝ B)

Քաղցած վիճակում գյուկոզի խաթարված մակարդակով (քաղցած վիճակում գյուկոզի մակարդակը՝ 6.1-6.9 մմոլ/լ) կամ խանգարված գյուկոզի տոլերատությամբ (գյուկոզի հանդեպ 2-ժամյա օրալ տոլերանտության թեստից հետո գյուկոզի պլազմային մակարդակը՝ 7.8 մմոլ/լ կամ ավել, սակայն 11.1 մմոլ/լ-ից ցածր) կանանց պետք է տարեկան մեկ անգամ կատարել գյուկոզի հանդեպ տոլերանտության թեստ: (տորիորդի ուժը՝ B)

ՁՊՀ-ով կանանց շուրջ 65-80%-ի շրջանում առկա է ինսուլինային ռեզիստենտություն՝ անկախ ճարպակալումից [27], և այն վատթարանում է քաշի ավելացմանը զուգընթաց [28]: Ինսուլինային ռեզիստենտությունը ցույց է տրված, որ վատացնում է վերարտադրողական և նյութափոխանակային ցուցանիշները, ՁՊՀ-ի դեխաքում 2-րդ տիպի դիաբետի և սիրտանոթային հիվանդությունների (ՍԱՀ) ռիսկը [29]: Նյութափոխանակային խանգարումների ամենաբարձր տարածվածությունը դիտվում է արտահայտված հիպերանդրոգենիազմով և անօվույացիայով կանանց շրջանում [6]: (Ապացուցողականության մակարդակը՝ 2+)

ՁՊՀ-ի դեպքում, անկախ ճարպակալումից առկա է գյուկոզի հանդեպ տոլերանտության խանգարման և 2-րդ տիպի շաքարային դիաբետի բարձր ռիսկ [30]: ՁՊՀ-ի դեպքում գրանցվել են նաև հիպերգլիկեմիայի ավելի վաղ սկիզբ և 2-րդ տիպի շաքարային դիաբետի արագ հարաճում [31]: ՁՊՀ-ն դասակարգվում է որպես 2-րդ տիպի շաքարային դիաբետի չձևափոխվող ռիսկի գործոն [32]: Բացի այդ, 2-րդ տիպի շաքարային դիաբետը հանդիսանում է սիրտանոթային հիվանդությունների մեծ ռիսկի գործոն, և կենսակերպի փոփոխությունների միջոցով բուժումը ցույց է տրվել, որ

կանխարգելում կամ հետաձգում է 2-րդ տիպի շաքարային դիաբետի զարգացումը: Ուստի, այս բարձր ռիսկի խմբի կանանց վաղ սկրինինգը և հայտնաբերումը կարևոր է: Ոչ եվրոպոիդ կանայք (հատկապես Հարավային Ասիայի կանայք) անկախ իրենց ՄՁԻ-ից պետք է անցնեն գլյուկոզի հանդեպ օրալ տոլերանտության թեստ, անկախ նրանց ՄՁԻ, ելնելով ինսուլինային ռեզիստենտության հանդեպ իրենց բարձր հակվածությունից: *(Ապացուցողականության մակարդակը՝ 2++)*

ՁՊՀ-ի ժամանակ միայն քաղցած վիճակում գլյուկոզի մակարդակի որոշումը ճշգրիտ չէ և բերում է 2-րդ տիպի շաքարային դիաբետի թերախտորոշման [34]: HbA1c-ի 6.5% և ավել մակարդակը առաջարկվել է շաքարային դիաբետի ախտորոշման համար ցուցանիշ: Սակայն, հարկ է զգուշություն ցուցաբերել, քանի որ կարող են բաց թողնվել 2-րդ տիպի շաքարային դիաբետ ունեցող պացիենտներ [34], և ՁՊՀ-ի դեպքում 2-րդ տիպի շաքարային դիաբետի ախտորոշման համար HbA1c-ի օգտագործումը պահանջում է ավելի հստակ սահմանում: Ուստի, գլյուկոզի հանդեպ օրալ տոլերանտության թեստը համապատասխան մեթոդ է համարվում ՁՊՀ-ով կանանց շրջանում շաքարային դիաբետի սկրինինգի համար: Սակայն, խելամիտ է անցկացնել HbA1c-ի որոշում այն դեպքերում, երբ կանայք չեն ցանկանում անցնել գլյուկոզի հանդեպ օրալ տոլերանտության թեստ, կամ երբ ռեսուրսներ առկա չեն: *(Ապացուցողականության մակարդակը՝ 2+)*

ՁՊՀ ախտորոշմամբ կանանց պետք է հարցնել (կամ նրանց զուգընկերներին) խռացնելու և օրվա ընթացքում թուլության/քնկոտության վերաբերյալ, տեղեկացնել քնի ապնոէի հնարավոր ռիսկերի մասին և առաջարկել հետազոտվել դրա կապակցությամբ և բուժվել անհրաժեշտության դեպքում: *(խորհուրդի ուժը՝ B)*

ՁՊՀ-ով գեր կանանց շրջանում օբստրուկտիվ քնի ապնոէի տարածվածությունը բարձր է: ՁՊՀ-ի դեպքում անդրոգենների մակարդակը և ինսուլինային ռեզիստենտությունը դրականապես ասոցացված են օբստրուկտիվ քնի ապնոէի հետ [35-38]: ՁՊՀ-ի ժամանակ օբստրուկտիվ քնի ապնոէն բերում է ինսուլինային ռեզիստենտության, և շնչուղիների շարունակական դրական ճնշումով թերապիան բարելավում է ինսուլինազգայունությունը ախտահարված կանանց շրջանում [39]: *(Ապացուցողականության մակարդակը՝ 2++)*

Բժիշկները պետք է տեղյակ լինեն, որ սիրտանոթային հիվանդությունների ռիսկերը գնահատող դասական հաշվիչները չեն վավերացվել ՁՊՀ-ով կանանց շրջանում: *(խորհուրդի ուժը՝ E)*

ՁՊՀ-ով բոլոր կանանց շրջանում առաջին անգամ ախտորոշումը կատարելիս պետք է անցկացնել ՍԱՀ ռիսկերի գնահատում՝ գնահատելով անհատական ՍԱՀ ռիսկի գործոնները (ճարպակալում, ֆիզիկական ակտիվության պակաս, ծխախոտի օգտագործում, 2-րդ տիպի շաքարային դիաբետի ընտանեկան պատմություն, դիսլիպիդեմիա, զարկերակային գերճնշում, գլյուկոզի հանդեպ խաթարված տոլերանտություն, 2-րդ տիպի շաքարային դիաբետ): *(խորհուրդի ուժը՝ C)*

Ջարկերակային գերճնշումը պետք է բուժել, սակայն լիպիդները նվազեցնող բուժման ռուտին անցկացում խորհուրդ չի տրվում և պետք է նշանակվի միայն մասնագետի կողմից: *(խորհուրդի ուժը՝ D)*

Սիրտանոթային հիվանդությունները մնում են կանանց շրջանում մահացության առաջատար պատճառներից մեկը: ՁՊՀ-ով կանանց շրջանում դիտվել են նուև ՍԱՀ նոր ռիսկի գործոններ [40-42] և սիրտանոթային դիսֆունկցիայի վաղ սկիզբ (էնդոթելիալ դիսֆունկցիա, զարկերակների կարծրացում, վահանիկներ և պսակաձև զարկերակների կայցիֆիկացում) [5,43] և կապված են ինսուլինային ռեզիստենտության և ճարպակալման հետ: Ադրոգենների քանակի բարձրացումը և ՍՀԿԳ-ի քանակի իջեցումը նույնպես կապված են ՍԱՀ բարձր ռիսկի հետ, ինչպես նախադաշտանադադարային, այնպես էլ հետդաշտանադադարային կանանց շրջանում [44]: «Կանանց Իշեմիկ Համախտանիշի Գնահատում» (WISE) հետազոտությունը հաստատել է ՁՊՀ-ով հետդաշտանադադարային կանանց շրջանում սիրտանոթային դեպքերի և մահացության բարձր տարածվածությունը [42]:

Մինչդեռ խելամիտ է թվում ՁՊՀ-ով կանանց գնահատել սիրտանոթային ռիսկերը, ներառյալ զարկերակային արյան ճնշումը, խոլեստերինը, տրիգլիցերիդները և բարձր խտության լիպոպրոտեինները, պետք է ընդունել, որ ՍԱՀ ռիսկերի գնահատման դասական հաշվիչները չեն վավերացվել այս խմբի կանանց շրջանում կրառման համար:

ՁՊՀ-ով և ստուգիչ խմբի կանանց շրջանում առկա են տարբերություններ ՍԱՀ ռիսկերի միջև, որոնք ավելի արտահայտված են ճարպակալումով ՁՊՀ-ով կանանց շրջանում [45]:

Քանի որ ՁՊՀ-ով կանայք ունեն ՍԱՀ բարձր ռիսկեր [40-42], որոնց մեծ մասը՝ կանխարգելիչ, ՁՊՀ-ով բոլոր կանանց պետք է գնահատել սկզբնական ՍԱՀ ռիսկերը՝ գնահատելով անհատական ՍԱՀ ռիսկի գործոնները (ճարպակալում, ֆիզիկական ակտիվության պակաս, ծխախոտի օգտագործում, 2-րդ տիպի շաքարային դիաբետի ընտանեկան պատմություն, դիսլիպիդեմիա, զարկերակային գերճնշում, գլյուկոզի հանդեպ խաթարված տոլերանտություն, 2-րդ տիպի շաքարային դիաբետ) և համապատասխան բուժել: Առաջին անգամ ախտորոշման ժամանակ ՁՊՀ-ով կանանց պետք է գնահատել ճարպակալումը՝ ՄՋԻ-ի և որովայնի շրջագծի միջոցով: *(Ապացուցողականության մակարդակը՝ 2++)*

Առաջին անգամ ախտորոշումը դնելիս և օրալ հակաբեղմնավորիչներով թերապիայի ժամանակ պետք է չափել զարկերակային ճնշումը: Զարկերակային գերճնշումը պետք է բուժել համաձայն համապատասխան ուղեցույցի, ըստ որի 140 մմ ս.ս. և բարձր սիստոլիկ և/կամ 90 մմ ս.ս. և բարձր դիաստոլիկ ճնշման դեպքում, որը չի պատասխանում կենսակերպի փոփոխություններին, հարկավոր է դիտարկել դեղորայքային թերապիա (շաքարային դիաբետի կամ այլ բարձր ռիսկի գործոնների առկայության պայմաններում դեղորայքային թերապիա կարող է պահանջվել 130 մմ ս.ս. և բարձր սիստոլիկ և/կամ 80 մմ ս.ս. և բարձր դիաստոլիկ ճնշման դեպքում): Զարկերակային գերճնշումով կանանվ, ովքեր օրալ հակաբեղմնավորիչներով բուժում սկսելու կարիք ունեն պետք է տրամադրել խորհրդատվություն դրանց ռիսկերի և օգուտների վերաբերյալ և պետք է հսկվեն և բուժվեն համաձայն համապատասխան ուղեցույցների [46]: *(Ապացուցողականության մակարդակը՝ 4)*

Առկա են նոր ապացույցներ, որ ստատինները բարելավում են հիպերանդրոգենիան և նյութափոխանակության պրոֆիլի ցուցանիշները ՁՊՀ-ով կանանց շրջանում [47,48]: Սակայն լիպիդներ նվազեցնող բուժում խորհուրդ չի տրվում հիպերանդրոգենիայի բուժման համար և պետք է նշանակվի միայն մասնագետի կողմից: *(Ապացուցողականության մակարդակը՝ 1+ և 4)*

ՁՊՀ-ով բոլոր կանանց շրջանում պետք է դիտարկել հոգեբանական խնդիրները: Դեպրեսիայի և/կամ տագնապի կապակցությամբ պետք է անցկացնել ռուտին սկրինինգ, և առկայության դեպքում գնահատել այն: Եթե ՁՊՀ-ով կնոջ սկրինինգը դրական է, պետք է առաջարկել հետագա գնահատում և համապատասխան խորհրդատվություն: (խորհուրդի ուժը՝ A)

ՁՊՀ-ով կանայք ունեն հոգաբանական և վարքային խանգարումների, ինչպես նաև կյանքի որակի նվազման բարձր ռիսկ [49-51]: Ցույց է տրված, որ ՁՊՀ-ն ունի զգալի վնասակար ազդեցություն կյանքի որակի վրա՝ համեմատած ստուգիչ խմբի հետ, և քաջի հետ կապված խնդիրները ամենաշատն են ազդում կյանքի որակի վրա ՁՊՀ-ով կանանց շրջանում [41]: ՁՊՀ-ով կանայք հոգեբանական դժվարությունների (օրինակ՝ դեպրեսիա և/կամ տագնապ), ուտելու հետ կապված խանգարումների, սեռական և անձնական շփման խանգարումների առաջացման բարձր ռիսկ ունեն [51]: (Ապացուցողականության մակարդակը՝ 1+)

Դիտարկել տալ հետևյալ երկու հարցերը այն անձանց, ովքեր հնարավոր է ունեն դեպրեսիա՝

- Անցած ամսվա ընթացքում հաճախ անհանգստացրե՞լ է Ձեզ տխրության, ընկճվածության կամ անհուսության զգացողությունը:
- Անցած ամսվա ընթացքում հաճախ անհանգստացրել է Ձեզ գործեր կատարելիս հետաքրքրության կամ բավարարվածության անկումը:

Եթե անձը պատասխանում է «այո» վերոնշյալ հարցերից որևէ մեկին, սակայն բժշկը իրավասու չէ կատարել մտավոր առողջության գնահատում, նրանք պետք է ուղղորդեն տվյալ անձին համապատասխան մասնագետի: Տեղեկացնել ընտանեկան բժշկին ուղղորդման վերաբերյալ:

Քաղցկեղ և ՁՊՀ

Օլիգո- և ամենորեան ՁՊՀ-ով կանանց շրջանում կարող են նախատրամադրել էնդոմետրիոմի հիպերպլազիայի և ավելի ուշ՝ կարցինոմայի: Խելամիտ է խորհուրդ

տալ գեստոգեններով բուժում՝ հանման արյունահոսություն խթանելու նպատակով, առնվազն յուրաքանչյուր 3-4 ամիսը: *(խորհուրդի ուժը՝ E)*

Արյունահոսության կամ ոչ նորմալ արգանդային արյունահոսության բացակայության դեպքում պետք է դիտարկել տրանսվագինալ ուլտրաձայնային հետազոտության անցկացում: ՁՊՀ-ի դեպքում 7 մմ-ից պակաս էնդոմետրիումի հաստությունը հավանական չէ լինի հիպերպլազիա: *(խորհուրդի ուժը՝ C)*

Հաստ էնդոմետրիումի կամ էնդոմետրիալ պոլիպի առկայության դեպքում պետք է դիտարկել կատարել բիոպսիա և/կամ հիստերոսկոպիա: *(խորհուրդի ուժը՝ E)*

Կրծքագեղձի կամ ձվարանների քաղցկեղի հետ կապ կարծես չկա, և հավելյալ հսկողության անհրաժեշտություն չկա: *(խորհուրդի ուժը՝ C)*

Երկար տարիներ հայտնի է եղել, որ օլիգո- և ամենորեան էստրոգենների նախադաշտանային մակարդակի առկայության պայմաններում կարող են բերել էնդոմետրիումի հիպերպլազիայի և կարցինոմայի [54]: Առկա են միջին որակի տվյալներ, որոնք խոսում են այն մասին, որ ՁՊՀ-ով կանայք ունեն էնդոմետրիումի քաղցկեղի 2.89 անգամ (95% CI 1.52-5.48) բարձր ռիսկ [55]: ՁՊՀ-ով կանանց շրջանում դաշտանների միջև 3 ամսից ավել ժամանակահատվածը (որը համապատասխանում է տարեկան 4-ից քիչ դաշտանին) կարող է ասոցացված լինել էնդոմետրիումի հիպերպլազիայի հետ [56]: Ցիկլիկ գեստոգեններով՝ առնվազն 12 օր տևողությամբ [57,58], հանման արյունահոսության կանոնավոր խթանումը, օրալ հակաբեղմնավորիչները կամ էնդոմետրիումի պաշտպանումը գեստոգեն պարունակող ներարգանդային սարքերի միջոցով, տեղին կլինի խորհուրդ տալ ՁՊՀ-ով օլիգոմենորեիկ կանանց [59], սակայն պատահական բաշխմամբ փորձարկումների բացակայության պաճառով պարզ չէ ամենաարդյունավետ սխեման [60]: *(Ապացուցողականության մակարդակը՝ 4)*

Էնդոմետրիումի հաստությունը գնահատելու համար տրանսվագինալ ուլտրաձայնային հետազոտություն անցած, ՁՊՀ-ով 56 ամենորեիկ հաջորդական պացիենտների շրջանում կատարված մի առաջահայաց հետազոտություն եզրակացրել է, որ էնդոմետրիումի հաստությունը դրականորեն կորելացվել է էնդոմետրիումի հիպերպլազիայի հետ, և 7 մմ-ից պակաս հաստության դեպքում էնդոմետրիումի հիպերպլազիայի որևէ դեպք չի եղել [56]: ՁՊՀ-ով կանայք կրծքագեղձի քաղցկեղի զարգացման նշանակալի բարձր ռիսկ չունեն՝ համեմատած ՁՊՀ չունեցող կանանց (RR

0.88, 95% CI 0.44–1.77) []: Քիչ թվով հետազոտություններ են անդրադարձել ՁՊՀ-ի և ձվարանների էպիթելիալ քաղցկեղի ռիսկի միջև հնարավոր կապին, արդյունքները վիճահարույց են, սակայն հիմնականում հուսադրող [63-65]: Քանի որ, կարծես կրծքագեղձի և ձվարանի քաղցկեղների հետ կապ չկա, ռուտին սկրինինգից զատ որևէ հավելյալ հսկողության անհրաժեշտություն չկա: *(Ապացուցողականության մակարդակը՝ 2+)*

Ռիսկի նվազեցմանն ուղղված ռազմավարություններ

Վարժություններ և քաշի կառավարում

Երկարաժամկետ ելքերը բարելավելու համար ՁՊՀ-ով կանանց խորհուրդ է տրվում որպես առաջին ընտրության բուժում մեկնարկել կենսակերպի փոփոխությունները, ներառյալ սննդակարգը, վարժությունները և քաշի նվազեցումը, և այն պետք է նախորդի և/կամ զուգակցի դեղորայքային բուժմանը: *(խորհուրդի ուժը՝ B)*

Կենսակերպի փոփոխությունները, ներառյալ սննդակարգը, վարժությունները և քաշի նվազեցումը խորհուրդ են տրվում ՁՊՀ-ով կանանց որպես բուժական առաջին ընտրություն [23], և այս փոփոխությունները պետք է նախորդեն և/կամ զուգակցվեն դեղորայքային բուժմանը: ՁՊՀ-ով և գիրությամբ կանանց շրջանում քաշի 5% նվազեցումը ցույց է տրված, որ նվազեցնում է ինսուլինային ռեզիստենտությունը և տեստոստերոնի մակարդակը, ինչպես նաև բարելավում է մարմնի կազմվածքը և սիրտանոթային ռիսկերի ցուցանիշները [45]: *(Ապացուցողականության մակարդակը՝ 2++)*

Ընդհանուր բնակչության շրջանում մոտիվացիոն հարցազրույցի անցկացումը և հաստատված վարքային մեթոդները ավելի արդյունավետ են երևում, քան ավանդական ընդունված խորհրդատվությունը քաշի, սննդակարգի և/կամ վարժությունների փոփոխման վերաբերյալ: Խորհուրդ տալ քաշի նվազման աջակցություն գտնել, ինքնահսկողություն սահմանել (ներառյալ պեղումետրի օգտագործում), ժամանակի կառավարման մեթոդներ, ախտադարձի կանխարգելման մեթոդներ, անհատական մեթոդների մշակում, հասարակական աջակցության ներառվելը և նպատակակետեր

սահմանելը, նշված բոլոր մեթոդները ցույց են տրված, որ եղել են օգտակար: Անհատական, խմբային և խառը միջամտությունները ցույց են տրված, որ արդյունավետ են [23,66,67]: Նաև, մասնագետների լայն շրջանակը (համապատասխան հմտություններով), ներառյալ բժիշկները, միջին բուժական անձնակազմը, սննդաբանները և վարժությունների մասնագետները, կարող են տրամադրել արդյունավետ միջամտություններ սննդակարգի և/կամ վարժությունների փոփոխման համար [66-69]: Վարքային փոփոխությունների մեթոդների կիրառումը և բարձր ինտենսիվությունը, շփման ժամանակը և տևողությունը բերում են քաշի նշանակալի ավելի նվազման [69]: Կենսակերպի փոփոխությունները, որոնց թիրախը քաշի նվազեցումն է (25 կգ/մ² կամ ավել ՄՋԻ-ով (հավելյալ քաշ/ճարպակալում) կանանց շրջանում) և քաշի ավելացման կանխարգելումը (18.5-24.9 կգ/մ² ՄՋԻ-ով կանանց շրջանում), պետք է ներառի և պակաս էներգետիկ արժեքով (կալորիականություն) սննդի ընդունում, և վարժություններ: Սա պետք է լինի ՁՊՀ-ով բոլոր կանանց բուժական առաջին ընտրությունը երկարաժամկետ բարդությունները կառավարելու համար [70]: Քաշի ավելացման կանխարգելումը՝ ընդունված կալորիաների վերահսկման և անկախ սննդակարգի կազմությունից առողջ սնունդ ընտրելու միջոցով պետք է թիրախային լինի ՁՊՀ-ով բոլոր կանանց համար: Վարքային փոփոխությունների մեթոդները պետք է թիրախավորեն քաշի ավելացման կանխարգելումը ՁՊՀ-ով բոլոր կանանց շրջանում [71]: Այն կանայք, ում մոտ չի ստացվել նվազեցնել քաշը կենսակերպի փոփոխությունների միջոցով, և նրանք, ովքեր ունեն 40 կգ/մ² և ավել ՄՋԻ, կամ նրանք, ովքեր ունեն 35 կգ/մ² և ավել ՄՋԻ համակցված ճարպակալման հետ կապված մեկ այլ բարձր ռիսկի վիճակի հետ (օրինակ՝ զարկերակային գերճնշում կամ 2-րդ տիպի շաքարային դիաբետ) պետք է դիտարկվեն բարիատրիկ վիրահատության համար [72]: *(Ապացուցողականության մակարդակը՝ 2++)*

Դեղորայքային բուժում

Չնայած, որ առկա են մեծ քանակի տվյալներ, որոնք ցույց են տալիս ինսուլին զգայունացնող դեղորայքի կիրառման անվտանգությունը, առայժմ չկան ապացույցներ, որ ինսուլին զգայունացնող դեղորայքը բերում է երկարաժամկետ օգուտների: (Խորհուրդի ուժը՝ B)

Քաշը նվազեցնող դեղորայքի կիրառումը կարող է օգտակար լինել հիպերանդրոգենեմիան նվազեցնելու համար: (հտրհուրդի ուժը՝ C)

ՁՊՀ-ի պոտենցիալ երկարաժամկետ հետևանքների հայտնաբերումը զուգակցվել է ինսուլին զգայունացնող դեղորայքի կիրառման հետ, ինչպիսիք են մեթֆորմինը և թիազոլիդինեդիոնները՝ ինսուլինային ռեզիստենտությունը նվազեցնելու համար և դրանով շաքարային դիաբետի և այլ նյութափոխանակային խանգարումների զարգացման ռիսկը նվազեցնելու համար: Սակայն, ՁՊՀ-ով կանանց շրջանում այս դեղորայքի կիրառման երկարաժամկետ օգուտների վերաբերյալ ծանրակշիռ ապացույցներ չկան [73-75]: Մեթֆորմինը [76-79] ցույց է տրված, որ շաքարային դիաբետ չունեցող ՁՊՀ-ով կանանց շրջանում ունի կարճաժամկետ օգտակար ազդեցություն ինսուլինային ռեզիստենտության և սիրտանոթային ռիսկերի այլ ցուցանիշների վրա [80,81]: Կան ապացույցներ, որ ՁՊՀ-ով կանանց շրջանում մեթֆորմինը նվազեցնում է անդրոգենների մակարդակը մոտ 11%-ով՝ համեմատած պլացեբոյի հետ [82], և չափավոր նվազեցնում է մարմնի քաշը, որը ցույց է տրվել որոշ, բայց ոչ բոլոր հետազոտություններում [83]: 37 կգ/մ²-ից բարձր ՄՁԻ-ով կանայք կարող է լավ չպատասխանեն մեթֆորմինի ստանդարտ դեղաչափին [84]: Հարկավոր է ընդգծել, որ և մեթֆորմինը, և թիազոլիդինեդիոնները լիցենզավորված չեն ՁՊՀ-ի կիրառման համար և բուժումը սկսելուց առաջ պետք է խորհրդատվություն տրամադրել կանանց, որպեսզի նրանք կատարեն տեղեկացված որոշում: *(Ապացուցողականության մակարդակը՝ 2++)*

Ներկայումս ՁՊՀ-ի դեպքում ՍԱՀ կանխարգելման նպատակով այս դեղորայքի կիրառման վերաբերյալ ուժեղ ապացույցներ չկան, և հետագա հետազոտությունների կարիք կա: ՁՊՀ-ով կանանց նյութափոխանակային պրոֆիլին նման կոհորտային պացիենտների շրջանում կատարված շաքարային դիաբետի կանխարգելման փորձարկման եզրակացությունը ցույց է տալիս, որ կենսակերպի փոփոխությունները առավել են մեթֆորմինից՝ կարդիոմետաբոլիկ ռիսկի գործոնները և 2-րդ տիպի շաքարային դիաբետի պրոգրեսիան բարելավելու առումով [85]: *(Ապացուցողականության մակարդակը՝ 2++)*

Մեթֆորմինը կարող է դիտարկվել ՁՊՀ-ով կանանց շրջանում, ովքեր արդեն ստանում են կենսակերպային բուժում և չունեն գյուլկազի հանդեպ տոլերանտության խանգարման

բարելավում, և այն կանանց շրջանում, ովքեր ունեն գյուկոզի հանդեպ տոլերանտության խանգարում [68,77-79]: *(Ապացուցողականության մակարդակը՝ 2+)*

Ինկրետինային թերապիաները, ինչպես օրինակ էքսենատիդը, ցույց է տրված, որ նվազեցնում են քաշը և բարելավում ինսուլինային ռեզիստենտությունը ՁՊՀ-ով կանանց շրջանում [86]: Սակայն ՁՊՀ-ի դեպքում այս դեղորայքի կիրառման կլինիկական փորձը սահմանափակ է և կարող են դիտվել զգալի կողմնակի երևույթներ, ուստի ինկրետինային թերապիաների ռուտին կիրառումը ՁՊՀ-ի դեպքում խորհուրդ չի տրվում: *(Ապացուցողականության մակարդակը՝ 4)*

Օրլիստատը բերում է քաշի փոքր նվազման և բիոքիմիորեն բարելավում է հիպերանդրոգենեմիան, սակայն չի ազդում գյուկոզ-ինսուլին հոմեոստազի կամ լիպիդային պրոֆիլի վրա [87]: *(Ապացուցողականության մակարդակը՝ 2++)*

ձվարանների էլեկտրոկաուտերիզացիա

ձվարանների էլեկտրոկաուտերիզացիան պետք է դիտարկել ընտրված անօվուլյատոր պացիենտներին, հատկապես նորմալ ՄՋԻ-ով պացիենտներին, որպես ձվազատման խթանման այլընտրանք: *(խորհուրդի ուժը՝ C)*

